# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
## ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք. Սևան

27.08.2021թ.
Ժամը 10:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Դոնարա Լալազարյան

**Անդամներ՝** Մարիաննա Առաքելյան

Վարդուհի Վարդանյան

Անի Խաչատրյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

(Դ. Լալազարյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.
5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. **Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Դ. Լալազարյան)

1.1 ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար <<**էլեկտրոնային կենցաղային տեխնիկայի**>> ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | <<Սվետան>> ՍՊԸ |
| 2 | <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **<u>ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>**

(Դ. Լալազարյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **<u>www.armeps.am</u>** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ <<Սվետան>> ՍՊԸ-ի, որի հայտում բացակայում են հրավերով սահմանված բոլոր հավելվածները:

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 4-րդ ենթակետով **որոշեց <<Սվետան>> ՍՊԸ-ի հայտը մերժել**, քանի որ նրա կողմից ներկայացված հայտում բացակայում է գնային առաջարկը:

2.3 <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. **<u>Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկված գները.</u>**

(Դ. Լալազարյան)

3.1<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հա փա բա ժին | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Բանջարեղեն կտրատող սարք | 520000 | <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ | 516700 | | 516700 |
| 2 | Հացի վառարան | 645000 | | | | |
| 3 | Սառնարան | 750000 | <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ | 736800 | | 736800 |
| 4 | [illegible] | 65000 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Խոհանոցի լվացարան | 30000 | | | | |

3.2 Քանի որ 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով հայտ չի ներկայացվել, ուստի հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով հանձնաժողովը որոշեց 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

**4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.**

(Դ. Լալազարյան)

4.1 Հայտերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Դ. Լալազարյան)

5.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/59 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից հայտարարել՝**

<<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ին-1-ին և 3-րդ չափաբաժիններով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** Դ. Լալազարյան

**Անդամներ՝** Մ. Առաքելյան

Վ. Վարդանյան

Ա. Խաչատրյան

**Գնումները համակարգող՝** Լ. Դավթյան